

**ՈՒՂԵՆՇՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**  
**ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Մարդասիրական հարցերով Գլխավոր քարտուղարի տեղակալ**

**Պրն. Սերջիո Վիեիրա դե Մելլոյի**

**ներածական խոսք ուղենշող սկզբունքների վերաբերյալ**

Մարդասիրական հանրությունը հետզհետե ավելի է գիտակցում ներքին տեղահանվածության ճգնաժամը, որի ազդեցության ոլորտում են աշխարհում ավելի քան 20 միլիոն մարդ: Թեպետ ներքին տեղահանվածների պատասխանատվությունը նախ և առաջ կառավարություններին ու տեղական իշխանություններին է, միջազգային հանրության համար կարևոր է ուղիներ փրկորել հակամարտության և ճգնաժամային իրավիճակներում ներքին տեղահանվածների պաշտպանման բարելավմանը նպաստելու համար: Մենք նաև պետք է այնպես կազմակերպենք մարդասիրական օգնությունը, որպեսզի այն նպաստի ներքին տեղահանվածների պաշտպանությանը:

ՄԱԿ-ի համակարգում կարևոր քայլեր են արվել ներքին տեղահանվածների կարիքներին ժամանակին և արդյունավետ արձագանքելու բարելավման ուղղությամբ: Միջգործակալական մշտական հանձնաժողովը ինձ է վստահել ՄԱԿ-ի համակարգում ներքին տեղահանվածների հետ կապված հարցերի համակարգողի պատասխանատվությունը: Այս պարտականությունը կատարելու առումով, նպատակադրված են բարելավել ՄԱԿ-ի ունակությունները ներքին տեղահանվածության իրավիճակներին արձագանքելու, ինչպես նաև ձևավորել խիստ համակարգվածություն և ինստիտուցիոնալ պատասխանատվությունների ավելի հստակ բաժանում և բավարար օժանդակություն օպերատիվ գործակալություններին:

Այս համատեքստում, ողջունում են Ներքին տեղահանվածների վերաբերյալ ուղենշող սկզբունքների կազմումը Գլխավոր քարտուղարի ներքին տեղահանվածների գծով հատուկ ներկայացուցչի կողմից: այս սկզբունքները, որոնք հիմնված են գոյություն ունեցող միջազգային մարդասիրական օրենքների և մարդու իրավունքների փաստաթղթերի վրա, կոչված են ծառայելու որպես ուղենշող միջազգային չափանիշ՝ կառավարություններին, ինչպես նաև միջազգային մարդասիրական և զարգացման գործակալություններին, ներքին տեղահանվածներին օգնություն և պաշտպանություն տրամադրելու հարցում:

Միջգործակալական մշտական հանձնաժողովը լիովին կողմ է ուղենշող սկզբունքներին և իր անդամներին խրախուսել է նրանց մասին տեղեկացնել իրենց գործադիր խորհուրդներին և անձնակազմին, հատկապես տեղերում աշխատողներին, որպեսզի այդ սկզբունքները կիրառվեն նրանց աշխատանքներում հոգուտ ներքին տեղահանվածների:

Իմ կարծիքով Ուղենշող սկզբունքները կարող են կարևոր դեր խաղալ ներքին տեղահանվածների կարիքների վերաբերյալ իրազեկության բարձրացման, մարդասիրական հանրությունում օժանդակության մոբիլիզացման և տեղերում աշխատող գործընկերների՝ ներքին տեղահանվածների պաշտպանման և օգնության խնդիրները լուծելու հարցում:

Հույս ունեմ որ ձեզանից յուրաքանչյուրը կաշխատի ապահովել ուղենշող սկզբունքների հնարավորին չափ լայն լուսաբանումն ու կիրառումը, որպեսզի իրականացան ներքին տեղահանվածների կարգավիճակի և նրանց նկատմամբ հոգածության չափը ազանց անհրաժեշտ բարելավումները:

## **Ներքին տեղահանվածների գծով գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ**

**Պրն. Ֆրանսիս Մ. Դենգի**

### **ներածական խոսքը**

Միջազգային հանրության առջև ծառայել է բռնի հակամարտությունների, մարդու իրավունքների կոպիտ խախտումների և այլ դժբախտ դեպքերի բերումով իրենց տներից ստիպված տեղահանված, բայց իրենց երկրի սահմաններում մնացած, անձանց պաշտպանության ապահովման ահռելի խնդիրը: Որպես կանոն նրանք հանդիպում են խիստ զրկանքների, դժվարությունների և խտրականության: Այս մարտահրավերին արձագանքելու համար մշակվեցին ներքին տեղահանվածների վերաբերյալ ուղենշող սկզբունքները:

Սկզբունքները ամրագրում են տեղահանվածության բոլոր էտապներում ներքին տեղահանվածների պաշտպանմանը վերաբերող իրավունքներն ու երաշխիքները: Նրանք պաշտպանում են հարկադիր տեղահանումից, առաջարկում են տեղահանվածության ընթացքում պաշտպանության և օգնության հիմքեր, և ամրագրում են անվտանգ վերադարձի, վերաբնակման և վերաինտեգրացման երաշխիքներ: Թեպետ նրանք պարտադիր կատարման ենթակա դրույթներ չեն, այս սկզբունքները արտացոլում են միջազգային մարդու իրավունքները և մարդասիրական

օրենքները և համանման ըստստականների օրենքները և համահունչ են նրանց:

Այս սկզբունքները մշակվել են տարիների ընթացքում, որոնք հաջորդեցին 1992 թվականին մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից ինձ տրված մանդատին, որը վերահաստատվեց թե՛ հանձնաժողովի և թե՛ ընդհանուր ասամբլիայի հետագա որոշումներով: Սկզբնապես, ինձ խնդրել էին ուսումնասիրել ներքին տեղահանվածության պատճառներն ու հետևանքները, ներքին տեղահանվածների կարգավիճակը միջազգային օրենքում, նրանց կարիքների բավարարման աստիճանը ներկայիս ինստիտուցիոնալ կազմակերպման դեպքում և նրանց պաշտպանության և օգնության բարելավման ուղիները:

Համապատասխանաբար, ներքին տեղահանվածներին անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների մշակումը և երկրներում գտնվող առաքելություններին կառավարությունների և մյուսների հետ տեղահանվածների անունից երկխոսություն ծավալելու հորդորումը եղել են իմ մանդատի հիմնական աշխատանքները: Միջազգային իրավական փորձագետների հետ համատեղ աշխատելով, ուսումնասիրեցի թե ներքին տեղահանվածները ինչքանով են պաշտպանված միջազգային օրենքում և մշակեցի «Իրավական նորմերի համադրում և վերլուծություն» (E/CN.4/1996/52/Add.2): Ուսումնասիրությունը հայտնաբերեց, որ թեպետ ներկայիս օրենքը էական պաշտպանություն է տրամադրում ներքին տեղահանվածներին, դեռևս կան կարևոր բնագավառներ որտեղ բավարար հիմքեր չեն ապահովվում նրանց պաշտպանության և օգնության համար: Հետևաբար, Հանձնաժողովը և Գլխավոր ասամբլեան ինձ խնդրեցին մշակել ներքին տեղահանվածների համար համապատասխան նորմատիվ շրջանակներ: Այս աշխատանքը հանգեցրեց Ուղենշող սկզբունքների մշակմանը, որը թե վերահաստատում է գոյություն ունեցած նորմերը և թե հայտնաբերում է մութ կողմերն ու լրացնում բացերը:

Երբ 1998 թվականին Ուղենշող սկզբունքները ներկայացրեցի Հանձնաժողովին, Հանձնաժողովը ընդունեց բանաձեվ Ուղենշող սկզբունքների, ինչպես նաև իմ, որպես Գլխավոր քարտուղարի ներկայացուցչի, շարունակական երկխոսության մեջ կառավարությունների և բոլոր նրանց հետ, որոնց մանդատը և աշխատանքները կապվում են ներքին տեղահանվածների կարիքներին, սույն սկզբունքների օգտագործման վերաբերյալ արտահայտած նպատակադրվածության մասին: Հանձնաժողովի որոշման բանաձևի մեջ նշում է նաև միջգործակալական մշտական հանձնաժողովի որոշման մասին, որը ողջունել էր Սկզբունքները և խրախուսել էր իր անդամներին նրանց մասին

տեղեկացնել իրենց գործադիր խորհուրդներին և անձնակազմին, հատկապես տեղերում աշխատողներին, որպեսզի այդ Սկզբունքները կիրառվեն նրանց աշխատանքներում հոգուտ ներքին տեղահանվածների:

Ուղենշող սկզբունքները պետք է արժեքավոր գործնական ուղեցույց հանդիսանան ներքին տեղահանվածների հետ կառավարությունների, այլ համապատասխան իշխանությունների, միջկառավարական կազմակերպությունների և ոչ-կառավարական կազմակերպությունների աշխատանքների համար: Հույս ունեն, որ նրանք լայնորեն շրջանառության մեջ կդրվեն և գործնական կիրառում կունենան տեղերում:

## **Ուղենշող սկզբունքներ ներքին տեղահանվածների վերաբերյալ**

### **Ներածություն - շրջանակները և նպատակը**

1. Ուղենշող սկզբունքները հասցեագրում են աշխարհում ներքին տեղահանվածների որոշակի կարիքները: Նրանք նշում են անձանց հարկադիր տեղահանվածությանից պաշտպանելու հետ կապված իրավունքներն ու երաշխիքները և տեղահանվածության ընթացքում, ինչպես նաև վերադարձի կամ վերաբնակման և վերաինտեգրացման ընթացքում, նրանց տրամադրվող պաշտպանությունն ու օգնությունը:
2. Սույն Սկզբունքների շրջանակներում ներքին տեղահանվածները այն անձինք կամ խմբերն են, որոնք հարկադրվել կամ պարտավորվել են լքել իրենց տները կամ մշտական բնակության վայրերը, մասնավորապես զինված հակամարտությունների, համատարած բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական և մարդածին աղետների հետեւանքներից խուսափելու պատճառով կամ նպատակով և որոնք չեն անցել միզազգայ նորեն ճանաչված որևէ պետական սահման:
3. Այս Սկզբունքները արտացոլում են միջազգային մարդու իրավունքների օրենքը և միջազգային մարդասիրական օրենքը և համահունչ են նրանց հետ: Նրանք ուղեույց են հանդիսանում՝ Գլխավոր քարտուղարի ներկայացուցչի համար՝ ներքին տեղահանվածների վերաբերյալ իր մանդատի իրականացման ուղղությամբ.

Պետությունների համար՝ երբ առերեսվում են ներքին տեղահանվածորդյան երևույթին.

(Բոլոր այլ իշխանությունների, խմբերի և անձանց համար՝ նրքին տեղահանվածների հետ նրանց հարաբերությունների առումով, և

Միջկառավարական և ոչ-կառավարական կազմակերպությունների համար՝ երբ հասցեագրում են ներքին տեղահանվածությունը:

4. Սույն Ուղենշող սկզբունքները պետք է հնարավորին չափ լայնորեն լուսաբանվեն և կիրառվեն:

## **ԲԱԺԻՆ I Ընդհանուր դրույթներ**

### **Սկզբունք 1**

1. Ներքին տեղահանվածները օգտվում են, լիարժեք հավասարությամբ, միջազգային և տեղական օրենքների ներքո, նույն այն իրավունքներից և ազատություններից, ինչից օգտվում են իրենց երկրի այլ անձինք: Նրանք խտրականության չեն ենթարկվում իրավունքներից և ազատություններից օգտվելու առումով՝ ներքին տեղահանված լինելու պատճառով:
2. Սույն Սկզբունքները չեն կիրառվում միջազգային օրենքով անձնական հանցագործության պատասխանատվության դեպքում, մասնավորապես ցեղասպանության, մարդկության դեմ ոճրագործությունների և ռազմական հանցագործությունների դեպքերում:

### **Սկզբունք 2**

1. Սույն Սկզբունքները հարգվում են բոլոր իշխանությունների, խմբերի և անձանց կողմից՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից և կիրառվում են առանց բացասական հետևանքների: Սույն Սկզբունքներին հետևելը չի ազդում ներգրավված որևէ իշխանությունների, խմբերի կամ անձանց իրավական կարգավիճակի վրա:
2. Սույն Սկզբունքները չեն մեկնաբանվում, որպես որևէ միջազգային մարդու՝ իրավունքների կամ միջազգային մարդասիրական օրենքի փաստաթղթի կամ տեղական օրենքներով անձին արված

իրավունքների դրույթները սահմանափակող, փոփոխող կամ կասեցնող հանգամանքներ: Մասնավորապես, սույն Սկզբունքները չեն վերաբերում այլ երկրներում ապաստան փնտրելու իրավունքին:

### **Սկզբունք 3**

1. Ազգային իշխանությունները առաջնային պարտականություն և պատասխանատվություն են կրում իրենց իրավասությունների շրջանակներում ներքին տեղահանվածների պաշտպանության և մարդասիրական օգնության համար:
2. Ներքին տեղահանվածները իրավունք անեն իշխանություններից պահանջել և ստանալ պաշտպանություն և մարդասիրական օգնություն: Նրանք չեն հետապնդվում կամ պատժվում նման պահանջներ ներկայացնելու համար:

### **Սկզբունք 4**

1. Սույն Սկզբունքները կիրառվում են առանց որևէ տեսակի խտրականության, ինչպիսիք են ցեղը, գույնը, սեռը, լեզուն, կրոնը կամ հավատը, քաղաքական և այլ կարծիքները, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումը, իրավական կամ հասարակական կարգավիճակը, տարիքը, հաշմանդամությունը, գույքը, ծնունդը, կամ որևէ նման չառանձին:
2. Որոշ ներքին տեղահանվածներ, ինչպես երեխաները, հատկապես խնամող չունեցող փոքրահասակները, հղի կանայք, փոքր երեխաներ անեցող մայրերը, տնային տնտեսության կին գլխավորները, հաշմանդամ և տարեց անձինք, ունեն իրենց վիճակին համապատասխան պաշտպանության և օգնության իրավունք և իրենց կարիքները հաշվի առնող վերաբերմունքի:

## **ԲԱԺԻՆ II. Տեղահանվածությունից պաշտպանվածության սկզբունքները**

### **Սկզբունք 5**

Բոլոր իշխանությունները և միջազգային դերակատարները հարգում են միջազգային օրենքով, ներառյալ մարդու իրավունքների և մարդասիրական օրենքի, իրենց վերագրված պարտականությունները և հարգանք են ապահովում նրանց նկատմամբ, բոլոր իրավիճակներում, որպեսզի անձանց տեղահանվածության հնարավոր պատճառ հանդիսացող պայմանները կանխվեն:

### **Սկզբունք 6**

1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի պաշտպանված լինելու իր տնից կամ մշտական բնակության վայրից հարկադիր տեղահան լինելուց:
2. Ինքնակամ տեղահանման արգելումը ներառում է հետևյալ դեպքերը՝ երբ այն հիմնված է ռասայական խտրականության, “էթնիկական մաքրման” կամ համանման պրակտիկաների քաղաքականությունների վրա, որոնք նպատակ ունեն կամ պատճառում են համապատասխան բնակչության էթնիկական, կրոնական կամ ռասայական կառուցվածքի փոփոխություններ:

Ձինված հակամարտությունների իրավիճակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան քաղաքացիական անձանց անվտանգությունը կամ ռազմական անհրաժեշտությունը պահանջում է այդ.

Լայնամասշտաբ զարգացման ծրագրերի դեպքում, որոնք հասարակության առաջնային շահերի տեսանկյունից հիմնավորված չեն.

Աղետների դեպքում, բացառությամբ այն դեպքերի երբ տուժածների անվտանգությանն ու առողջությանը պահանջում է էվակուացիա, և

Երբ այն օգտագործվում է որպես կոլեկտիվ պատիժ:

3. Տեղահանումը պայմանների թելադրած ժամկետից ավել չի տևում:

### **Սկզբունք 7**

1. Նախքան անձանց տեղահանման մասին որոշում կայացնելը, համապատասխան իշխանությունները

ապահովում են բոլոր հնարավոր տարբերակների ուսումնասիրումը, որպեսզի խուսափվի տեղահանումից: Եթե այլընտրանք չկա, ձեռնարկվում են բոլոր միջոցները, որպեսզի նվազագույնի հասցվեն տեղահանման մասշտաբները և նրա բացասական հետևանքները :

2. Նման տեղահանում կազմակերպող իշխանությունները ապահովում են, գործնականորեն առավելագույնս հնարավորին չառնվ, որպեսզի համապատասխան հարմարություններ տրամադրվի տեղահանվածներին և տեղահանումը կատարվի անվտանգության, սննդի, առողջապահական և հիգիենայի բավարար պայմաններում և ընտանիքի անդամները միմյանցից չբաժանվեն:

3. Եթե տեղահանումը տեղի է ունենում զինված հակամարտությունների և աղետների արտակարգ փուլերից բացի այլ իրավիճակներում, ապա տրվում են հետևյալ երաշխիքները՝  
Յրենքով լիազորված պետական իշխանությունը նման միջոցառումների իրականացնելու վերաբերյալ որոշակի որոշում է ընդունում.

Բավարար միջոցներ են ձեռնարկվում տեղահանման ենթակա անձանց երաշխավորելու լրիվ տեղեկատվություն տեղահանման պատճառների և կարգի, ինչպես նաև համապատասխան դեպքերում, ըոխհատուցման և վերատեղավորման վերաբերյալ.

Վերցվում է տեղահանման ենթակա անձանց ազատ և իրազեկ համաձայնությունը.

Համապատասխան իշխանությունները փորձում են ներգրավել տուժածներին, հատկապես կանանց, իրենց վերատեղավորման պլանավորման և կառավարման գործում.

Իրավապահպան գործողությունները, անհրաժեշտության դեպքում, իրականացվում են իրավասու իրավական մարմինների կողմից, և

Հարգվում է համապատասխան փոխհատուցման իրավունքը, ներառյալ նման որոշումների վերանայումը համապատասխան դատական մարմինների կողմից:

## Սկզբունք 8



Տեղահանումը չպետք է կատարվի այնպես, որ խախտվի տեղահանվողների կյանքի, արժանապատվության, ազատության և անվտանգության իրավունքները:

#### Սկզբունք 9

Պետությունները հատուկ պարտավորություն ունեն բնիկներին, ընթրամասնություններին, գյուղացիներին, հովիվներին և իրենց հողի հետ առանձնակի կապ ունեցող այլ խմբերին պաշտ պանելու տեղահանումից:

### **ԲԱԺԻՆ III. Տեղահանման ընթացքում պաշտպանության սկզբունքները**

#### Սկզբունք 10

1. Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի անկապտելի իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոք հարկադիր կերպով չի զրկվում կյանքից: Ներքին տեղահանվածները պաշտպանվում են մասնավորապես՝

Ցեղասպանությունից,

Սպանությունից.

խմբային կամ կանայական իրականացվող մահապատժից. և

Հարկադիր անհետացումից, ներառյալ առևանգումը կամ չհայտարարված կալանքը, որն սպառնում է մահվան կամ նրա պատճառը դառնում:

Վերոհիշյալ գործողությունների կատարմանը սպառնալը կամ ակնարկելը արգելվում է:

2. Պատերազմական դրության մեջ այլևս չմասնակցող ներքին տեղահանվածների դեմ ուղղված հարձակումները կամ այլ բռնարարքները արգելվում են բոլոր դեպքերում: Ներքին տեղահանվածները պաշտպանվում են մասնավորապես հետևյալ դեպքերում՝

Ուղղակի կամ անհիմն հարձակումներ կամ այլ բռնարարքներ, ներառյալ այնպիսի տարածքների ստեղծումը, որտեղ քաղաքացիական անձանց վրա հարձակում գործելը թույլատրվում է.

Սովը որպես պատերազմական մեթոդ.

Նրանց օգտագործումը որպես ռազմական օբյեկտներին

հարձակումից պաշտպան”լու վահան, կամ պատնեշել, նպաստել կամ խոչնդոտել ռազմական գործողությունները նրանց միջոցով.  
Հարձակումներ նրանց ճամբարների կամ բնակավայրերի վրա. և  
Ցամաքային ականների օգտագործում:

## Սկզբունք 11

1. Յուրաքանչյուր մարդ ունի արժանապատվության և ֆիզիկական, հոգևոր և բարոյական առողջության իրավունք:
2. Ներքին տեղահանվածները, անկախ այն բանից թե նրանց ազատությունը սահմանափակվել է թե ոչ, պաշտպանվում են մասնավորապես հետևյալ դեպքերում`

Բռնաբարություն, հաշմություն, կտտանք, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ և անձնական արժանապատվության նկատմամբ այլ ոտնձգություններ, օրինակ կանանց նկատմամբ բռնության, ստիպողական մարմնավաճառություն և որևէ այլ անպատշաճ ոտնձգության.

Ստրկատիրություն կամ ստրկատիրության որևէ ժամանակակից ձև, օրինակ վաճառել ամուսնության նպատակով, սեռական շահագործում, կամ անչափահասների հարկադիր աշխատանք, և

Ներքին տեղահանվածների շրջանակում սարսափ առաջացնելու նպատակով կատարվող բռնարարքներ:

Արգելվում են վերոհիշյալ գործողությունների կատարման վերաբերյալ սպառնալիքներն ու ակնարկումները:

## Սկզբունք 12

1. Յուրաքանչյուր մարդ ունի անձի ազատության և անվտանգության իրավունք: Ոչ ոք չի ենթարկվում կամայական ձերբակալման կամ կալանման:
2. Սույն իրավունքը ներքին տեղահանվածների դեքում իրականացնելու նպատակով նրանք չեն բնակեցվում կամ մեկուսացվում ճամբարներում: Եթե բացառիկ դեպքերում նման բնակեցումը կամ մեկուսացումը բացարձակապես անհրաժեշտ է, ապա այն չի տևում պայմանների կողմից թելադրված ժամանակահատվածից ավելի:
3. Ներքին տեղահանվածները պաշտպանվում են իրենց տեղահանման պատճառով խտրականորեն ձերբակալվելուց և կալանավորվելուց:
4. Ներքին տեղահանվածները ոչ մի դեպքում գերի չեն վերցվում:

### Սկզբունք 13

1. Տեղահանված երեխաները ոչ մի դեպքում չեն անդամագրվում կամ նրանցից չի պահանջվում և նրանց թայլ չի ստվում մասնակցել պատերազմական գործողաթյաններին:
2. Ներքին տեղահանվածները պաշտպանվում են տեղահանվածության պատճառով որ և բանակում անդամագրելու խտրական պրակտիկայից: Մասնավորապես, բոլոր դեպքերում արգելվում է որևէ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ պրակտիկա, որը հարկադրում է համաձայնել անդամագրվելուն և պատժում է անհամաձայնությունը:

### Սկզբունք 14

1. Յուրաքանչյուր ներքին տեղահանված անձ ունի ազատ տեղաշարժվելու և բնակության վայրի ազատ ընտրության իրավունք:
2. Մասնավորապես, ներքին տեղահանվածները ունեն ճամբարներից կամ այլ բնակավայրերից ազատ ելունուտ անելու իրավունք:

### Սկզբունք 15

Ներքին տեղահանվածները ունեն՝  
Երկրի այլ մասերում անվտանգություն ընտրելու իրավունք.  
Երկրից հեռանալու իրավունք.  
Այլ երկրում ապաստան ընտրելու իրավունք, և  
Իրենց կյանքը, անվտանգությունը, ազատությունը և/կամ առողջությանը վտանգող որևէ վայր հարկադիր կերպով վերադառնալուց կամ այնտեղ վերաբնակվելուց պաշտպանվածության իրավունք:

### Սկզբունք 16

1. Բոլոր ներքին տեղահանվածները ունեն կորցրած հարազատների ճակատագրի և զտնվելու վայրի մասին տեղեկություններ ունենալու իրավունք:
2. Համապատասխան իշխանությունները փորձում են ճշտել անհայտ կորած ճանաչված ներքին տեղահանվածների ճակատագիրն ու զտնվելու վայրը և համագործակցել այս աշխատանքով զբաղված միջազգային կազմակերպությունների հետ: Նրանք տեղեկացնում են առաջին կարգի բարեկամին ընտրման աշխատանքների ընթացքի և

որևէ արդյունքի մասին:

3. Համապատասխան իշխանությունները փորձում են գտնել մահացածների դիակները և հաստատել նրաց ինքնությունը, կանխել նրանց կողոպտումն ու հաշմունը, և նպաստել դիակի վերադարձմանը առաջին կարգի բարեկամներին կամ համապատասխան կերպով նրանց հողին հանձնել:
4. Ներքին տեղահանվածների գերեզմանատները պետք է պաշտպանվեն և հարգվեն բոլոր դեպքերում: Ներքին տեղահանվածները պետք է ունենան իրենց մահացած բարեկամների գերեզմանները այցելելու իրավունք:

### Սկզբունք 17

1. Յուրաքանչյուր մարդ ունի իր և իր ընտանիքի նկատմամբ հարգանքի իրավունք:
2. Ներքին տեղահանվածների այս իրավունքը իրականացնելու նպատակով, ընտանիքի այն անդամներին, որոնք ցանկանում են միասին ապրել, թույլատրվում է դա անել:
3. Այն ընտանիքները, որոնց անդամները տեղահանման պատճառով միմյանցից մասնատված են, պետք է վերամիավորվեն հնարավորին չառ արագ: Բոլոր համապատասխան միջոցները ձեռնարկվում են նման ընտանիքների վերամիավորմանը նպաստելու համար, հատկապես երբ երեխաներ կան: Համապատասխան իշխանությունները նպաստում են ընտանիքի անդամների հարցումներին և խրախուսում են ընտանիքների վերամիավորման աշխատանքներ տանող միջազգային կազմակերպություններին և համագործակցում նրանց հետ:
4. Ներքին տեղահանված ընտանիքների անդամները, որոնց անձնական ազատությունը սահմանափակվել է ճամբարներում բնակեցվելով կամ մեկուսացվելով իրավունք ունեն միասին ապրելու:

### Սկզբունք 18

1. Բոլոր ներքին տեղահանվածները ունեն բավարար կենսամակարդակի իրավունք:
3. Ինչպես նվազագույն, անկախ պայմաններից, և առանց խտրականության, իրավասու մարմինները ներքին տեղահանվածներին տրամադրում և ապահովում են անվտանգ հնարավորություն օգտվելու՝

- Յիմնական սննդից և խմելու ջրից.  
Յիմնական տանիքից և բնակարանից.  
Յամապատասխան հագուստից, և  
Յիմնական բժշկական ծառայություններից ու հիգիենայից:
3. Յատուկ ջանք է ներդրվում կանանց լիարժեք մասնակցությունը այս հիմնական մատակարարումների պլանավորման և բաշխման գործում ապահովելու ուղղությամբ:

### Սկզբունք 19

1. Բոլոր վիրավորված և հիվանդ ներքին տեղահանվածները, ինչպես նաև հաշմանդամները ստանում են անհրաժեշտ բժշկական խնամք և ուշադրություն, գործնականորեն առավելագույն հնարավորին չաղով և նվազագույն ուշացումով, առանց, բժշկականից բացի այլ հիմքերով, նրանց միջև տարբերություն դնելու: Անհրաժեշտության դեպքում, ներքին տեղահանվածները կարող են օգտվել հոգեբանական և սոցիալական ծառայություններից:
2. Կանաց առողջապահական կարիքներին պետք է հատուկ ուշադրություն դարձվի, ներառյալ կանանց առողջապահական ծառայություններ տրամադրող հիմնարկների հասանելիությունը, օրինակ վերարտադրողական առողջապահություն, ինչպես նաև սեռական և այլ բնույթի արարքներից տուժածների համապատասխան խորհրդատվություն: Յատուկ ուշադրություն պետք է դարձվի ներքին տեղահանվածների շրջանակում վարակիչ և ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելմանը, ներառյալ ՁԻԱՅ-ը:
- 3.

## Սկզբունք 20

1. Յուրաքանչյուր մարդ ունի օրենքի առջև որպես ինքնությունը հաստատված անձ ներկայանալու իրավունք:
2. Սույն իրավունքը ներքին տեղահանվածների համար իրականացնելու նպատակով համապատասխան իշխանությունները նրանց տրամադրում են իրենց իրավական իրավունքներից օգտվելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, օրինակ անձնագրեր, անձը հաստատող փաստաթղթեր, ծննդական վկայականներ և ամուսնության վկայականներ: Մասնավորապես, իշխանությունները նպաստում են նոր փաստաթղթերի տրմանը կամ տեղահանման ընթացքում կորած փաստաթղթերի ըոխարհմանը, առանց անհամապատասխան պայմաններ պարտադրելու, օրինակ անձից պահանջել վերադառնալ մշտական բնակության վայրը այս և այլ պահանջվող փաստաթղթերը ձեռք բերելու համար:
3. կանայք և տղամարդիկ անեն նման անհրաժեշտ ըստաթղթեր ստանալու հավասար իրավունքներ և նման փաստաթղթերի իրենց անունով տրման իրավունք:

## Սկզբունք 21

1. Ոչ ոք կամայականորեն չի գրկվում գույքից և ունեցվածքից:
2. Ներքին տեղահանվածների գույքն ու ունեցվածքը բոլոր դեպքերում պաշտպանվում է, մասնավորապես՝  
Կողոպուտից.  
Ուղղակի կամ անհիմն հարձակումներից կամ այլ բռնարարքներից.  
Որպես ռազմական գործողություններ կամ նպատակների վահան օգտագործվելուց.  
Վրեժխնդրաթյան օբյեկտ դառնալուց, և որպես կոլեկտիվ պատժի միջոց ոչնչացվելուց կամ բռնագրավվելուց:
3. Ներքին տեղահանվածների կողմից լքված գույքն ու ունեցվածքը պետք է պաշտպանվի ոչնչացումից և կամայական ու անօրինական բռնագրավումից, զավթումից կամ օգտագործումից:

## Սկզբունք 22

1. Ներքին տեղահանվածների նկատմամբ, անկախ այն բանից թե ճամբարում են ապրում թե ոչ, խտրականություն չի դրվում տեղահանված լինելու պատճառով հետևյալ իրավունքներից օգտվելու հարցում՝

Մտքի, խղճի, կրոնի կամ հավատի, կարծիքի և արտահայտման ազատության իրավունքներ.

Ազատորեն աշխատանք ընտրելու և տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքներ.

Ազատ միավորվելու և համայնքի հարցերում հավասարապես մասնակցելու իրավունքներ.

Ընտրելու և պետական կառավարման ու հասարակական հարցերում մասնակցելու իրավունքներ, ներառյալ այս իրավունքները կիրառելու համար անհրաժեշտ միջոցներից օգտվելու իրավունք, և

իրենց հասկանալի լեզվով հաղորդակցվելու իրավունք:

### **Սկզբունք 23**

1. Յուրաքանչյուր մարդ ունի կրթության իրավունք:
2. Սույն իրավունքը ներքին տեղահանվածների համար իրականացնելու նպատակով, համապատասխան իշխանությունները ապահովում են այս անձանց, մասնավորապես հաշմանդամ երեխաների, կրթություն ստանալը, որն անվճար և պարտադիր է տարրական դասարանների համար: Կրթությունը պետք է հարգի նրանց մշակութային ինքնությունը, լեզուն և կրոնը:
3. Հատուկ ջանք պետք է ներդրվի ապահովելու համար կանանց և աղջիկների լիարժեք և հավասար մասնակցությունը կրթական ծրագրերին:
4. Կրթական և ուսուցման հարմարություններ են տրամադրվում ներքին տեղահանվածներին, մասնավորապես երիտասարդներին և կանանց, անկախ այն բանից թե ճամբարում են ապրում թե ոչ, երբ պայմանները այն թույլ են տալիս:

### **ԲԱԺԻՆ IV. Մարդասիրական օգնության սկզբունքները**

### **Սկզբունք 24**

1. Բոլոր մարդասիրական օգնությունները իրականացվում են մարդկության և անաչառության սկզբունքներին համապատասխան և առանց խտրականության:
2. Ներքին տեղահանվածներին տրամադրվող մարդասիրական օգնությունը չի վերաբաշխվում, մասնավորապես քաղաքական և ռազմական նկատառումներով:

## Սկզբունք 25

1. Ներքին տեղահանվածներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու առաջնային պարտականությունն ու պատասխանատվությանը երկրի իշխանություններինն է:
2. միջազգային մարդասիրական կազմակերպությունները և այլ համապատասխան դերակատարները իրավունք ունեն առաջարկելու իրենց ծառայությունները ներքին տեղահանվածներին օժանդակելու նպատակով: Նման առաջարկությունը չի դիտվում որպես թշնամական արարք կամ միջամտություն պետության ներքին գործերին և համարվում է բարի կամքի դրսևորամ: Այս համաձայնությունը չեղյալ չի համարվում կամայականորեն, մասնավորապես երբ համապատասխան իշխանությունները անկարող են կամ չեն ցանկանում տրամադրել պահանջվող մարդասիրական օգնությունը:
3. Բոլոր համապատասխան իշխանությունները տալիս են մարդասիրական օգնության ազատ տեղափոխման թույլտվություն և նպաստում են դրան և ապահովում են այդ օգնության տրամադրմամբ զբաղվող անձանց համար ներքին տեղահանվածների արագ և անխոչնդոտ հասանելիությունը:

## Սկզբունք 26

մարդասիրական օգնությամբ զբաղվող անձանց, նրանց տրանսպորտի միջոցները և մատակարարումները հարգվում և պաշտպանվում “ն: նրանք չ”ն “նթարկվում հարձակումներ”րի կամ այլ բռնարարքներ”րի:

## Խսկզբունք27

1. Միջազգային մարդասիրական կազմակերպությունները և այլ համապատասխան դերակատարները, օգնություն տրա-



մադրելիս պետք է հաշվի առնեն ներքին տեղահանվածների պաշտպանման կարիքներն ու մարդու իրավունքները և այս ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկեն: Այս կատարելիս, այս կազմակերպությունները և դերակատարները պետք է հարգեն համապատասխան միջազգային չափանիշներն և վարվելակերպի նորմերը:

2. Նախորդ պարբերությունը չի վերաբերում պաշտպանման մանրատ ունեցող միջազգային կազմակերպությունների պաշտպանման պատասխանատվություններին, որոնց ծառայությունները կարող են առաջարկվել կամ պահանջվել պետությունների կողմից:

## **ԲԱԺԻՆ V. Վերադարձի, վերաբնակման և վերաինտեգրացման սկզբունքները**

### **Սկզբունք 28**

1. Իրավասու իշխանությունները կրում են առաջնային պարտականություն և պատասխանատվություն ստեղծելու այնպիսի պայմաններ, ինչպես նաև տրամադրելու համապատասխան միջոցներ, որոնք թույլ կտան ներքին տեղահանվածներին կամավոր կերպով վերադառնալ, անվտանգ և արժանապատիվ եղնակով, իրենց տները և մշտական բնակության վայրերը, կամ կամավոր կերպով վերաբնակվել երկրի մի այլ մասում: Այս իշխանությունները ըործում են նպաստել վերադարձած կամ վերաբնակված ներքին տեղահանվածների վերաինտեգրացումը:
2. Հատուկ ջանք պետք է ներդրվի ներքին տեղահանվածների լիարժեք մասնակցությունը իրենց վերադարձի կամ վերաբնակման և վերաինտեգրացման պլանավորման ու կառավարման մեջ ապահովելու ուղղությամբ:

### **Սկզբունք 29**

1. Այն ներքին տեղահանվածների նկատմամբ, որոնք վերադարձել են իրենց տները կամ մշտական բնակության վայ-

րերը կան վերաբնակվել են երկրի այլ մասում, խտրականություն չի դրվում իրենց տեղահանված լինելու պատճառով: Նրանք իրավունք ունեն լիարժեքորեն և հավասար կերպով մասնակցել պետական կառավարման հարցերին բոլոր մակարդակներում և հավասարապես օգտվեն պետական ծառայություններից:

2. իրավասու իշխանությունները պարտականություն և պատասխանատվություն ունեն օժանդակել վերադարձած և/կամ վերաբնակված ներքին տեղահանվածներին վերականգնելու, հնարավորին չառնել, իրենց գույքն ու ունեցվածքը, որը լքել են կամ կորցրել տեղահանման պատճառով: Երբ այդ գույքի և ունեցվածքի վերականգնումը անհնարին է, իրավասու իշխանությունները տրամադրում կան օժանդակում են այս անձանց ստանալ համապատասխան փոխհատուցում կամ արդար փոխհատուցման մի այլ միջոց:

### Սկզբունք 30

Բոլոր համապատասխան իշխանությունները տալիս են թույլտվություն և նպաստում են միջազգային մարդասիրական կազմակերպությունների և այլ համապատասխան դերակատարների համար, իրենց համապատասխան մանդատների իրագործման նպատակով, ներքին տեղահանվածների արագ և անխոչնդոտ հասանելիությունը՝ նրանց վերադարձին, վերաբնակմանը և վերաինտեգրացմանը օժանդակելու նպատակով:

